Արձանագրություն
Գեղարքունիքի մարզի Վարդաձոր համայնքի ավագանու 2020թ. հունիսի 11-ի թիվ 11-ի նիստի:

Նիստին մասնակցում էին Շմավոն Կարապետյանը, Մամիկոն Նազարյանը, Արմեն Սիրականյանը և Նորայր Սիրականյանը, բացակայում էին Մարզպետունի Ավետիսյանը, և Ռուստամ Ներսիսյանը:
Նիստը վարեց համայնքի ղեկավար Ռ. Սիրականյանը:

Օրակարգ՝
Հարց-1. Համայնքի 2020թ. բյուջեում փոփոխություններ կատարելու մասին:
Զեկուցող՝ Ռ. Սիրականյան
Օրակարգ՝
Հարց-2. <<Գոզե>> ՍՊԸ-ի դիմումի քննարկումը, նրան համայնքում բազալտի երևակման երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ կատարելու համար նախնական համաձայնություն տալու մասին:
Զեկուցող՝ Ռ. Սիրականյան
Հարց-3. Համայնքի տարածքի, համայնքային սեփականություն համարվող, կադաստրային ծածկագիրը 05-084-0109-0036, մակերեսը՝ 3.0հա նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ արոտավայր, գործառնական նշանակությունը փոխելու մասին:
Զեկուցող՝ Ռ. Սիրականյան
Հարց-4. Համայնքի տարածքի, համայնքային սեփականություն համարվող, կադաստրային ծածկագիրը 05-084-0599-0002, մակերեսը՝ 0.0042հա, հասցեն՝ Ալաշկերտի փողոց թիվ 38/1 հողամասը, նպատակային նշանակություն՝ բնակավայրերի, աճուրդ վաճառքի միջոցով օտարելու մասին:
Հարց-5. Համայնքի անդամ Ռուդիկ Բաղդասարի Աբրահամյանի դիմումի քննարկումը, համայնքի ՎԻՎ հանձնաժողովի որոշման կատարումը դադարեցնելու մասին:
Հարց-6. Համայնքի սոցիալապես անապահով մի շարք անդամների դիմումների քննարկումը նրանց համայնքի բյուջեից միանվագ դրամական օգնություն ցույց տալու մասին:
Զեկուցող՝ Ռ. Սիրականյան

Վարդաձոր համայնքի ավագանին որոշեց՝
Հաստատել նիստի օրակարգը՝

Կողմ 4 դեմ, 0 ձեռնպահ 0

1. Շմավոն Կարապետյան

2. Մամիկոն Նազարյան

3. Արմեն Սիրականյան

4. Նորայր Սիրականյան

Համայնքի ղեկավար՝ Ռոբերտ Սիրականյան

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՁՈՐ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 16-Ն

11-ը հունիսի 2020թ. գ. Վարդաձոր

# Համայնքի 2020թ. բյուջեում փոփոխություններ կատարելու մասին

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետով, 83-րդ հոդվածի երկրորդ կետով և «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

## Համայնքի ավագանին որոշում է՝

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդաձոր համայնքի ավագանու 2020թ. հունվարի 10-ի «Վարդաձոր համայնքի 2020թ. բյուջեն քննարկելու և հաստատելու մասին» թիվ 01-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. Վարդաձոր համայնքի 2020թ. բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից 960000 /ինը հարյուր վաթսուն հազար/ դրամ պակասեցնել և այն ավելացնել՝

1.1 Ճանապարհի և տրանսպորտ ոլորտի 4251 հոդվածին 700000 /յոթ հարյուր հազար/ դրամ,

1.2 Ոռոգման ոլորտի 4241 հոդվածին 100000 /հարյուր հազար/ դրամ,

1.3 Ջրամատակարարման ոլորտի 4241 հոդվածին 160000 /հարյուր վաթսուն հազար/ դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

1. Շմավոն Կարապետյան

2. Մամիկոն Նազարյան

3. Արմեն Սիրականյան

4. Նորայր Սիրականյան

Համայնքի ղեկավար Ռոբերտ Սիրականյան

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱԶՈՐ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 17-Ա

11-ը հունիսի 2020թ. գ. Վարդաձոր

**<<Գոզե>> ՍՊԸ-ի դիմումի քննարկումը, նրան համայնքում բազալտի երևակման երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ կատարելու համար նախնական համաձայնություն տալու մասին**

Հիմք ընդունելով Վարդաձոր համայնքում հանրային լսումների արձանագրությունը և «Գոզե» ՍՊԸ-ի դիմումը.

## Համայնքի ավագանին որոշում է՝

1. Տալ նախնական համաձայնություն <<Գոզե>> ՍՊԸ-ին սահմանված կարգով իրականացնելու բազալտի երևակման երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

Հարցը քվեարկվեց՝

Կողմ 4 դեմ, 0 ձեռնպահ 0

1. Շմավոն Կարապետյան
2. Մամիկոն Նազարյան
3. Արմեն Սիրականյան
4. Նորայր Սիրականյան

Համայնքի ղեկավար Ռոբերտ Սիրականյան

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱԶՈՐ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 18-Ա

11-ը հունիսի 2020թ. գ. Վարդաձոր

**Համայնքի տարածքի, համայնքային սեփականություն համարվող, կադաստրային ծածկագիրը 05-084-0109-0036, մակերեսը՝ 3.0հա նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ արոտավայր, գործառնական նշանակությունը փոխելու մասին**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 29-րդ կետով.

**Համայնքի ավագանին որոշում է՝**

1. Համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող, ծածկագիր 05-084-0109-0036, մակերեսը՝ 3.0հա նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ արոտավայր, նպատակային նշանակությունը փոխել գյուղատնտեսական արտադրական տարածքի, գյուղատնտեսական կենդանիների ֆերմաներ կառուցելու համար:

Հարցը քվեարկվեց՝

Կողմ 4 դեմ, 0 ձեռնպահ 0

1. Շմավոն Կարապետյան
2. Մամիկոն Նազարյան
3. Արմեն Սիրականյան
4. Նորայր Սիրականյան

Համայնքի ղեկավար Ռոբերտ Սիրականյան

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՁՈՐ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 19-Ն

11-ը հունիսի 2020թ. գ. Վարդաձոր

**Համայնքի տարածքի, համայնքային սեփականություն համարվող, կադաստրային ծածկագիրը 05-084-0599-0002, մակերեսը՝ 0.0042հա, հասցեն՝ Ալաշկերտի փողոց թիվ 38/1 հողամասը, նպատակային նշանակություն՝ բնակավայրերի, աճուրդ վաճառքի միջոցով օտարելու մասին**

Ղեկավարվելով ՀՀ Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Վարդաձոր համայնքի ղեկավարի առաջարկությունը.

**Համայնքի ավագանին որոշում է՝**

1. Թույլատրել համայնքի ղեկավարին՝ համայնքային սեփականություն համարվող, կադաստրային ծածկագիրը 05-084-0599-0002, մակերեսը՝ 0.0042հա, հասցեն՝ Ալաշկերտի փողոց թիվ 38/1 հողամասը, կառուցապատման իրավունքով, աճուրդ վաճառքի միջոցով օտարելու:
2. Մեկնարկային գինը սահմանվել են համայնքի ավագանու 2020թ. փետրվարի 10-ի թիվ 04-Ն որոշմամբ և հավելաճի քայլը մեկնարկային գնի 5%-ի չափով:
3. Համայնքի ղեկավարին ապահովել աճուրդի հրապարակայնությունը, նախապատրաստել համապատասխան փաստաթղթերը աճուրդը կազմակերպելու և անցկացնելու համար:

Հարցը քվեարկվեց՝

Կողմ 4 դեմ, 0 ձեռնպահ 0

1. Շմավոն Կարապետյան
2. Մամիկոն Նազարյան
3. Արմեն Սիրականյան
4. Նորայր Սիրականյան

Համայնքի ղեկավար Ռոբերտ Սիրականյան

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱԶՈՐ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 20-Ն

11-ը հունիսի 2020թ. գ. Վարդաձոր

**Համայնքի անդամ Ռուդիկ Բաղդասարի Աբրահամյանի դիմումի քննարկումը, համայնքի ՎԻՎ հանձնաժողովի որոշման կատարումը դադարեցնելու մասին**

Ղեկավարվելով «Վարչական իրավախախտումներիվերաբերյալ» ՀՀ օրենքի 301-րդ հոդվածի 2-րդ կետով, հաշվի առնելով Ռ.Աբրահամյանի դիմումում նշված նրա ընտանիքի ծանր վիճակը, և այն, որ նա արդեն դիմել է համայնքապետարան և ստացել առաջադրանք, շինարարությունը համապատասխան փաստաթղթերով ապահովելու համար.

**Համայնքի ավագանին որոշում է՝**

1. Դադարեցնել համայնքի ՎԻՎ հանձնաժողովի կողմից ս/թ հունիսի 1-ի թիվ 1 որոշումով Վարդաձոր համայնքի անդամ Ռուդիկ Բաղդասարի Աբրահամյանի վարչական պատասխանատվության մասին տուգանքը, այն է չբռնագանձել 100000 /հարյուր հազար/ դրամ տուգանքը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

Հարցը քվեարկվեց՝

Կողմ 4 դեմ, 0 ձեռնպահ 0

1. Շմավոն Կարապետյան
2. Մամիկոն Նազարյան
3. Արմեն Սիրականյան
4. Նորայր Սիրականյան

Համայնքի ղեկավար Ռոբերտ Սիրականյան

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՁՈՐ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 21-Ա

11-ը հունիսի 2020թ. գ. Վարդաձոր

**Համայնքի սոցիալապես անապահով մի շարք անդամների դիմումների քննարկումը նրանց համայնքի բյուջեից միանվագ դրամական օգնություն ցույց տալու մասին:**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 42-րդ կետով և «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ կետի և 18-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով.

**Համայնքի ավագանին որոշում է՝**

1. Թույլատրել համայնքի 2020թ. Տարեկան բյուջեի սոց. աջակցության 4729 հոդվածից 140000 / հարյուր քառասուն հազար/ դրամ հատկացնել համայնքի սոցիալապես անապահով հետևյալ բնակիչներին հետևյալ քանակությամբ:
1/ Նիկողոսյան Հրաչիկ Անդրանիկի – 20000 դրամ,
2/ Խաչատրյան Զավեն Սարգսի - 30000 դրամ,
3/ Մանուկյան Սոֆիա Սուրենի – 30000 դրամ,
4/ Հայրապետյան Սոֆիա Ապետնակի – 20000 դրամ,
5/ Մանուկյան Զարման Ապետնակի – 20000 դրամ,
6/ Ավետիսյան Քնարիկ Նորիկի – 20000 դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

Հարցը քվեարկվեց՝

Կողմ 4 դեմ, 0 ձեռնպահ 0

1. Շմավոն Կարապետյան
2. Մամիկոն Նազարյան
3. Արմեն Սիրականյան
4. Նորայր Սիրականյան

Համայնքի ղեկավար Ռոբերտ Սիրականյան